

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ**

**ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ
2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ /Ջասմ Մախմուդով/

**Հաստատվել է համայնքի ավագանու 2018 թվականի 13 ապրիլի N30 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)**

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	5
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը	6
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	8
2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	9
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	11
3.1 Համայնքի զարգացման տեսլական	11
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	15
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	27
5. ՀՀԶԾ մշտադիտարկումը (մոնիթորինգ)	33
Հավելված 1-Ծրագրերի անձնագրեր.....	34

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ալագյազ համայնքի 2018-2022թթ. հնգամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2022 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), տեղական

առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ): Հնգամյա զարգացման ծրագիրը կազմված է չորս բաժիններից՝

1. Համայնքի իրավիճակի նկարագրում.

2. Նպատակների Սահմանում և գործողությունների պլանավորում.

3. Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր Ֆինանսավորում.

4. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մոնիթորինգ:

Ծրագրի նախագծը հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի ծրագիրը կապված համայնքի բնակիչների կենսական պայմանների բարելավման, ինչպես նաև պետական, մարզային, տարածաշրջանային ռազմավարական նշանակության այլ ծրագրեր: Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ալագյազ համայնքը ձևավորվել է 2017թվականի նոյեմբերի 5-ին կայացած ընտրությունների արդյունքում: Ալագյազ համայնքին են միացել Ավշեն, Կանիաշիր, Ճարճակիս, Միջնատուն, Միրաք, Շենկանի, Ջամշու, Ռյա Թազա, Սադունց և Սիփան բնակավայրերը: Համայնքի վարչական տարածքը կազմում է 125կմ², Համայնքը գտնվում է Արագած լեռան

ստորոտում, ծովի մակերևույթից 2025-2150 մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 66 կմ, մարզկենտրոնից՝ 44 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ծաղկահովիտ, Մելիքայուղ և Ապարան համայնքներին:

Համայնքի կլիման բարեխառն լեռնային է, ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները զով են համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 15-35-ի սահմաններում, հունվարյանը՝ -10-30-ի սահմաններում: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են: Համայնքում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Համայնքում հաշվառված է 1040 ընտանիք՝ 4843 բնակչով: Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 3041 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 1591 և կանայք՝ 1450: Բնակչության տարիքային կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան - 392 մարդ
- 7-17 տարեկան – 724 մարդ
- 18-62 տարեկան – 1640 մարդ
- 63 և ավելի տարեկան – 285 մարդ

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի 2018թ. փաստացի մուտքերի ուղղությունների տեսակարար կշիռներն ընդհանուր մուտքերի մեջ սեփական մուտքերը (հարկեր և տուրքեր, այլ եկամուտներ) կազմում են ընդամենը 36%, իսկ պաշտոնական դրամաշնորհների (պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերի մեջ կազմում է 64%: Սա նշանակում է, որ համայնքի բյուջեի մուտքերի մեծամասնությունը ստացվում է պետ բյուջեի միջոցներով, այսինքն համայնքի ֆինանսական անկախության (ինքնուրույնության)

աստիճանն միջին է և համայնքը մեծ կախվածության մեջ է գտնվում ՀՀ պետական բյուջեից:

Համայնքի տարածքում գործում են առևտրի կետեր, որոնց գործունեությունը մինչ այժմ շարունակվում է:

Համայնքում չկա գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չեն կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 5328, այդ թվում կով՝ 2793, իսկ մանր եղջերավոր անասունների քանակը՝ 4627, այդ թվում ոչխար՝ 4331, այծ՝ 294: Համայնքի գրեթե յուրաքանչյուր տնային տնտեսություն պահում է նաև թռչուններ, առավելապես՝ հավեր՝ հիմնականում սեփական կարիքների բավարարման համար:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:

Համայնքի տարածքում գործում են ֆուտբոլի խաղահրապարակներ, որից օգտվում են համայնքի երիտասարդները:

Համայնքում գործում են 4 միջնակարգ և 7 հիմնական դպրոցներ, որոնք նախատեսված են միջինը մինչև 50-200 աշակերտի համար , ներկայումս սովորում են ընդհանուր 507 աշակերտ: Դպրոցում սովորող աշակերտները միջնակարգ կրթություն ստանալուց հետո առաջադիմություն ունեցող աշակերտները ուսումը շարունակում են Վանաձորի և Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Համայնքում փաստացի բնակվող ընտանիքներից 158-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 158 ընտանիքները: Համայնքում բնակվում են նաև մոտ 71 հաշմանդամ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման առաջիկա հինգ տարիների համար սահմանված ծրագրերի ցանկը և ֆինանսավորման չափը այսպիսին է

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1.	Ալագյազ, Զամշլու, Սիփան, Միջնատուն, Միրաք և Ճարճակիս բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի անցկացում	22.950,0
2.	Ճարճակիս բնակավայրի հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում	1500,0
3.	Սիփան և Ավշեն բնակավայրերը տանող ճանապարհի նորոգում	3.000,0
4.	Միրաք բնակավայրի 1կմ երկարությամբ ներհամայնքային ջրագծի վերանորոգում	1.400,0
5.	Ճարճակիս բնակավայր տանող 2,5կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում	150.000,0
6.	Միջնատուն բնակավայր մտնող 2,5կմ երկարությամբ ջրագծի կառուցում	5000,0
7.	Ալագյազի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում	12.500,0
8.	Ալագյազ, Զամշլու, Ճարճակիս և Ռյա-Թազա, բնակավայրերի Գյուլամիջյան ճանապարհների վերանորոգում	4.500,0
9.	Ավշեն բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	500,0
10.	Միջնատուն, Զամշլու, Ավշեն և Սադունց բնակավայրերում հանդիսությունների սրահի վերանորոգում	8.000,0
11.	Սադունց խմելու ջրի արտաքին ջրագծերի վերանորոգում	800,0
12.	Շենկանի բնակավայր տանող ճանապարհի նորոգում	3.500,0
13.	Միրաք բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	500,0
14.	Զամշլու բնակավայրի 100մ երկարությամբ արտաքին ջրագծի վերանորոգում	200,0

15	Սիփան և Ավշեն բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	1200,0
16	Միջնատուն և Միրաք բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	800,0
17	Շենկանի, Կանիաշիր և Սադունց բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	1.500,0
18	Ալագյազ և Ջամշու խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	1.000,0

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստ.	2018թ. պլան.	2019թ. պլան.	2020թ. պլան.	2021թ. պլան.	2022թ. պլան.
-----	--------------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	-----------------	-----------------

19	Ճարճակիս բնակավայրում խմելու ջրի ջրամբարի վերանորոգում	500,0
20	Միջնատուն բնակավայրի խմելու ջրի ջրամբարների կառուցում	2.500,0
21	Սադունց և Սիփան բնակավայրերի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	900,0
22	Ջամշու, Սիփան և Ավշեն բնակավայրերի գազաֆիկացում	150.000,0
23	Ալագյազ բնակավայրում մանկապարտեզի կառուցում	40.000,0
24	Ալագյազ, բնակավայրում պուրակի և խաղահրապարակի կառուցում	2.500,0
25	Կանիաշիր, Շենկանի և Միջնատուն բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում	5.000,0
26	Ջամշու և Ճարճակիս բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում	2.500,0
27	Ալագյազ համայնքի 11 վարչական բնակավայրերում աղբամանների տեղադրում	5.000,0
28	Ռյա-Թազա բնակավայրում սպորտ դահլիճի կառուցում	25.000,0
29	Գարու և ցորենի մթերման կայան	15.000,0
30	Պոլիկլինիկայի կառուցում	50.000,0
31	Ռյա-Թազա բնակավայրի խմելու ջրի նոր ջրագիծ	3.500,0
32	Սիփան բնակավայրում հանդիսությունների սրահի ձեռք բերում և վերանորոգում	6.000,0
33	Կաթի մթերման և մշակման կենտրոնի կառուցում	30.000,0

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

1	2	4	5	6	7	8	9
1.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	103155,2	112660,1	122010,0	126980,0	131980,0	138740,0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	27026,1	28605,2	31210,0	33460,0	35110,0	36540,0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	20702,8	21080,2	22210,0	23760,0	24510,0	24990,0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	1,2	130,5	210,0	260,0	310,0	450,0
	Հողի հարկ	20701,6	20949,7	22000,0	23500,0	24200,0	24540,0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	5981,9	7015,0	7500,0	8100,0	8700,0	9250,0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	5981,9	7015,0	7500,0	8100,0	8700,0	9250,0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	341,4	510,0	1500,0	1600,0	1900,0	2300,0
	Տեղական տուրքեր	341,4	510,0	1500,0	1600,0	1900,0	2300,0
2	Այլ եկամուտներ	8096,2	11897,8	13800,0	14520,0	15870,0	17200,0
2.1	Գույքի վարձակալությունից եկամուտներ	8096,2	8497,8	10000,0	10370,0	11220,0	12100,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	7676,2	7117,8	8200,0	8400,0	9100,0	9800,0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	420,0	1380,0	1800,0	1970,0	2120,0	2300,0
2.2	Վարչական գանձումներ	0	3400,0	3800,0	4150,0	4650,0	5100,0
	Աղբահանության համար գանձվող վճար	0	3000,0	3000,0	3200,0	3400,0	3600,0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման վճար	0	400,0	800,0	950,0	1250,0	1500,0
3	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	68032,9	72157,1	77000,0	79000,0	81000,0	85000,0
	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	68032,9	72157,1	77000,0	79000,0	81000,0	85000,0

Աղյուսակ 1

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքում բացակայում է գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգ, այդ պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չեն կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Սակայն, դրա հետագա զարգացման համար համայնքում խոտհարքների տարածքները չեն բավականացնում:

Համայնքում անասնապահությամբ, թռչնապահությամբ արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում: Ալագյազ համայնքը գտնվում է լեռնային շրջանում, ձմեռը երկարատև է, որը խոչընդոտ է հանդիսանում անասնապահության համար:

Համայնքի գյուղատնտեսությանը մեծ վնասներ են հասցնում կարկուտը, սակավաջրությունը և անձրևի քիչ տեղումները:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտները բավականին քիչ են, այդ իսկ պատճառով համայնքում հնարավոր չէ իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն համայնքի զարգացմանը:

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը (մոտիկությունը մարզկենտրոն Աշտարակին և մայրաքաղաքին՝ Երևանին)
- Համայնք կենտրոնով է անցնում M3 միջպետական մայրուղին, ինչպես նաև H21 հանրապետական նշանակության ճանապարհը
- Համայնքում միջնակարգ և հիմնական դպրոցների գործելը
- Համայնքում հեռախոսակապի և թվային հեռուստատեսության առկայությունը
- Համայնքում առկա բնակիչների մոտ 70%-ը ունեն համակարգիչ և միացված են համացանցին

- Տնտեսական ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը և համեմատաբար բավարար վիճակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի ոչ բավարար լինելը
- Մշակույթի տների բացակայությունը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- Համայնքում աղբահանության կազմակերպման խնդիրը՝
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն համայնքի կենտրոնի, մարզկենտրոնի և այլ համայնքների հետ
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Գյուղատնտեսական արտադրանքի ստացման բարձր ինքնարժեքը և իրացման դժվարությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Մշակույթի տների կառուցումն ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի վարչական բնակավայրերի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպատակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներին ջրահեռացման հեղեղատարների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբահանության կազմակերպման ցածր մակարդակի պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը
- Ցրտահարություններ, կարկուտ

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1.Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման համայնքային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում,
- տնային պայմաններում բնական հյութերի արտադրության կազմակերպում և աստիճանական զարգացում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական

պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում մասնակցության ձևերի զարգացման միջոցով,
- համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով:

Համայնքի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրի

հիմնական նպատակներն են՝

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի բյուջեի եկամուտների ավելացման համար նախատեսվում է կազմակերպել համայնքային գույքի վարձակալությամբ տրամադրելու աշխատանքներ, մասնավորապես համայնքի հողերը վարձակալությամբ տրամադրել: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի և շինությունների օտարում՝ հասարակական և արտադրական կառույցների ինչպես նաև առևտրի կետերի կառուցման համար:

- Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում, ծառատունկ և փողոցների մաքրման աշխատանքներ:

- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը առաջիկա հինգ տարիների համար արտահայտված տոկոսներով

Հ/հ	Մուտքերի անվանումը	2017թ. փաստացի	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	Ընդամենը աճ %
1	2	4	5	6	7	8	9	10
1	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	125.0	130.5	210.0	260,0	310,0	450.0	260%
2	Հողի հարկ	20701.6	20949.7	22000.0	23500,0	24200,0	24540.0	19%
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	5981.9	7015.0	7500.0	8100,0	8700,0	9250.0	55%
4	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	341.4	510.0	1500.0	1600,0	1900,0	2300.0	573%
6	Հողի վարձակալությունից եկամուտներ	8096.2	8497.8	10000.0	10370,0	11220.0	12100.0	49%

- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը արտահայտված տոկոսով:

	Բնակիչների ընդհանուր թիվը 2017թ. փաստացի	Բնակիչների ընդհանուր թիվը 2018թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2019թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2020թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2021թ. կանխատեսում	Բնակիչների ընդհանուր թիվը 2022թ. կանխատեսում
--	--	--	--	--	--	--

1	Ընդամենը	4800	4950	5100	5150	5250	5400
2	Աճը տոկոսներով	0%	3.1%	3.1%	1%	2%	3.1%

• Համայնքում առկա անասնագլխաքանակը և կանխատեսումը առաջիկա հինգ տարիների համար

N	Անվանումը	2018թ. փաստացի	2019թ. կանխատ.	2020թ. կանխատ.	2021թ. կանխատ.	2022թ. կանխատ.
1	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	5328	5500	6100	6200	6500
2	Ոչխարների և այծերի գլխաքանակը	4627	4895	4950	5100	5300
3	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	9326	10000	10500	11200	12000

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Ալագյազ, Ջամշլու, Սիփան, Միջնափուն, Միրաք և Ճարճակիս բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի անցկացում

Ալագյազ միավորված համայնքի վարչական բնակավայրերում կտեղադրվի լուսավորության համակարգ, որը էապես կնպաստի համայնքի բնակչության բարեկեցության խթանմանը , ինչպես նաև բնակավայրերում տուրիզմի զարգացումը:

1. Վերը նշված բնակավայրերում ներկայումս չկան լուսատուներ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղերում գյուղամիջյան ճանապարհները ոչ բարեկարգ են և առկա են ցեխակույթեր, գիշերային ժամերին բնակչության տեղաշարժի համար առաջացնում են մեծ դժվարություններ, աշխատանքների իրականացումը նախատեսել 2018թ. ընթացքում:
2. Համայնքի 2018թ. բյուջեում նախատեսել 11.500,0 հազ. դրամ գումար՝ կառուցելու 170 հատ լուսավորության սյուներ:
3. Մինչև 2018թ. հունիսի 30-ը իրականացնել և ավարտել վերը նշված բնակավայրերի փողոցների լուսավորության աշխատանքները:

2. Ճարճակիս բնակավայրի հանդիսությունների սրահի հադակի սալիկապատում

2018թ. համայնքային բյուջեով նախատեսել 1.500.000 դրամ Ճարակիս վարչական բնակավայրի հանդիսությունների սրահի հադակի սալիկապատման աշխատանքները կազմակերպելու համար, որը էապես կնպաստի համայնքի զարգացմանը և բնակիչներին հնարավորություն կտա հուղարկավորությունները և տոնական միջոցառումները իրականացնել պարզաճ կարգով:

3. Սիփան և Ավշեն բնակավայրերը տանող ճանապարհի նորոգում

2018թ. համայնքային բյուջեով նախատեսել 3.000.000 դրամ Սիփան և Ավշեն տանող ճանապարհների փոսալցման աշխատանքները կատարելու համար: Ծրագիրը էապես կբարելավի բնակիչների վիճակը և ավելի արդյունավետ կդարձնի բնակավայր-կենտրոն կապը:

4. Միրաք բնակավայրի 1կմ երկարությամբ ներհամայնքային ջրագծի վերանորոգում

2018թ. համայնքային բյուջեով նախատեսել 1.400.000 դրամ Միրաք վարչական բնակավայրում ջրամատակարարման շուրջ 1կմ հադվաճը վերանորոգելու համար:

Ծրագիրը էապես կնպաստի բնակիչների կենսապայմանների բարելավմանը, քանի որ այս պահին բնակավայրի մի փողոց չունի ջրամատակարարման գիծ և ջուրը բերվում է այլ փողոցներից:

5. Ճարճակիս բնակավայր տանող 2,5կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում

2019-2020թթ. նախատեսվում է իրականացնել Ճարճակիս բնակավայր տանող շուրջ 2,5կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում, նախագծի ընդհանուր արժեքն է 150.000.000 դրամ, որից 142.5 մլն. դրամը ակնկալվում է պետական բյուջեյից, իսկ 7,5մլն. դրամը համայնքային բյուջեյից

6. Միջնատուն բնակավայր մտնող 2,5կմ երկարությամբ ջրագծի կառուցում

2019թ. նախատեսվում է իրականացնել Միջնատուն վարչական բնակավայրից դեպի Կանիաշիր և Ռյա-Թազա տանող ջրատարի շուրջ 2,5 կմ հատվածի խողովակաշարի անցկացում: Ծրագրի արժեքն է 5.000.000 դրամ, որից 4.750.000 դրամը ակնկալվում է ստանալ պետական բյուջեյից, իսկ 250.000 դրամը նախատեսվում է համայնքային բյուջեով :

7. Ալագյազի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում

2018թ.-ին նախատեսվում է իրականացնել Ալագյազի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգումը: Ծրագրի արժեքն է 12,5 մլն. դրամ, որը ակնկալվում է ստանալ պետական բյուջեյի հրապապ օգնության ծրագրով:

8. Ալագյազ, Ջամշու, Ճարճակիս և Ռյա-Թազա, բնակավայրերի Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

2018-2020թթ. նախատեսվում է իրականացնել Ալագյազ, Ջամշու, Ճարճակիս և Ռյա-Թազա բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ:

Աշխատանքների համար համայնքային բյուջեով նախատեսել նախատեսվում է 4,5 մլն դրամ:

9. Ավշեն բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում

2018թ. նախատեսվում է վերանորոգել Ավշեն բնակավայրի խմելու ջրի ջրամբարի վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեով նախատեսվում է 500.000 դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

10. Միջնատուն, Ջամշու, Ավշեն և Սադունց բնակավայրերում հանդիսությունների սրահի վերանորոգում

2018-2022թթ. համայնքային բյուջեով 8.000,0 հազար դրամ նախատեսվում է Միջնատուն, Ջամշու, Ավշեն, Սադունց բնակավայրերում հանդիսությունների սրահների վերանորոգման աշխատանքների համար:

11. Շենկանի բնակավայրի խմելու ջրի արտաքին ջրագծերի վերանորոգում

2021թ. -ին համայնքային բյուջեով նախատեսվում է 800.000 դրամ Շենկանի բնակավայրի խմելու ջրագծի շուրջ 500 մետր հատվածը վերանորոգելու համար:

12. Շենկանի բնակավայր տանող ճանապարհի նորոգում

2018-2020թթ. համայնքային բյուջեով նախատեսվում է 3.500.000 դրամ տրամադրել Շենկանի վարչական բնակավայր տանող ճանապարհի վերանորոգման աշխատանքների իրականացման համար: Ծրագիրը կնպաստի բնակիչների սոցիալական և տնտեսական վիճակի բարելավմանը:

13. Միրաք բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում

2019թ.-ին նախատեսվում է վերանորոգել Միրաք բնակավայրի խմելու ջրի ջրամբարի վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեով նախատեսվում

է 500.000 դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

14. Ջամշլու բնակավայրի 100մ երկարությամբ արտաքին ջրագծի վերանորոգում

2018թ. նախատեսվում է վերանորոգել Ջամշլու բնակավայրի շուրջ 100 մետր խմելու ջրի ջրագիծը: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեով նախատեսվում է 200.000 դրամ: Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

15. Սիփան և Ավշեն բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

2021թ-ին նախատեսվում է իրականացնել Սիփան և Ավշեն բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ: Աշխատանքների համար համայնքային բյուջեով նախատեսվում է 1.200.000 դրամ:

16. Միջնատուն և Միրաք բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

2022թ-ին նախատեսվում է իրականացնել Միջնատուն և Միրաք բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ: Աշխատանքների համար համայնքային բյուջեով նախատեսվելու է 800.000 դրամ:

17. Շենկանի, Կանիաշիր և Սադունց բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում

2020-2022թ-ին նախատեսվում է իրականացնել Շենկանի, Կանիաշիր և Սադունց բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների փոսալցման աշխատանքներ: Աշխատանքների համար համայնքային բյուջեով նախատեսվել 1.500.000 դրամ:

18. Ալագյազ և Ջամշու խմելու ջրի ջրամբարների վերանորոգում

2020-2022թ.-ին նախատեսվում է վերանորոգել Ալագյազ և Ջամշու վարչական բնակավայրերի խմելու ջրի ջրամբարի վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 1.000.000 դրամ: Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

19. Ճարճակիս բնակավայրում խմելու ջրի ջրամբարի վերանորոգում

2019թ.-ին նախատեսվում է վերանորոգել Ճարճակիս բնակավայրի խմելու ջրի ջրամբարի վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 500.000 դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

20. Միջնատուն բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում

2021-2022թ.-ին նախատեսվում է կառուցել Միջնատուն բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 2,500.000 դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

21. Սադունց և Սիփան բնակավայրերի խմելու ջրի ջրամբարի վերանորոգում

2018-2019թ.-ին նախատեսվում է վերանորոգել Սադունց և Սիփան բնակավայրերի խմելու ջրի ջրամբարները: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 900.000 դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

22. Զամշլու, Ավշեն և Սիփան բնակավայրերի գազաֆիկացում

2021-2022թթ.-ին Զամշլու, Ավշեն և Սիփան բնակավայրերում նախատեսվում է իրականացնել գազաֆիկացում: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 7,5 մլն դրամ, դոնոր կազմակերպությունից 7,5 մլն. դրամ և պետական բյուջեյից 136,0 մլն. դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում կբարելավվի բնակիչների սոցիալական վիճակը: Ծրագիրը էապես կնպաստի նաև բնակավայրերի տնտեսական վիճակին:

23. Ալագյազ բնակավայրում մանկապարտեզի կառուցում

2018թ.-ին նախատեսվում է Ալագյազ բնակավայրում կառուցել մանկապարտեզ, որի կառուցումն իրականացնելու համար համայնքային բյուջեով նախատեսվում է 2.000.000 դրամ, իսկ դոնոր կազմակերպությունից ակնկալվում է 38.000.000 : Ծրագրի իրականացման արդյունքում ինչպես Ալագյազ, այնպես էլ համայնքի մյուս բնակավայրերի երեխաները հնարավորություն կունենան հաճախել մանկապարտեզ , որը էապես կնպաստի մատաղ սերնդի հետագա կրթադաստիարակչական զարգացմանը:

24. Ալագյազ բնակավայրում պուրակի և խաղահրապարակի կառուցում

2019-2020թթ.-ին նախատեսվում է Ալագյազ բնակավայրում կառուցել պուրակ և խաղահրապարակ, որի կառուցումն իրականացնելու համար համայնքային բյուջեյի հոդվածով նախատեսվում է 2,5 մլն. դրամ, իսկ դոնոր կազմակերպությունից ակնկալվում է 38.000.000 : Ծրագրի իրականացման արդյունքում ինչպես Ալագյազ, այնպես էլ համայնքի մյուս բնակավայրերի երեխաները հնարավորություն կունենան հաճախել մանկապարտեզ , որը էապես կնպաստի մատաղ սերնդի հետագա կրթադաստիարակչական զարգացմանը:

25. Կանիաշիր, Շենկանի և Միջնափուն բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում

2018-2022թ.-ին նախատեսվում է վերանորոգել Կանիաշիր, Շենկանի և Միջնապուրն բնակավայրերի դպրոցների մասնակի վերանորոգում: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 5.000,0 հազար դրամ: Ծրագրի իրականացումը կնպաստի դպրոցների ներքին հարդարման բարեկարգմանը, որը նաև իր ազդեցությունը կունենա կրթության որակի բարձացման վրա:

26. Զամշլու և Ճարճակիս բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում

2019-2020թ.-ին նախատեսվում է վերանորոգել Զամշլու և Ճարճակիս բնակավայրերի դպրոցների մասնակի վերանորոգում: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 2.500,0 հազար դրամ: Ծրագրի իրականացումը կնպաստի դպրոցների ներքին հարդարման բարեկարգմանը, որը նաև իր ազդեցությունը կունենա կրթության որակի բարձացման վրա:

27. Ալագյազ համայնքի 11 վարչական բնակավայրերում աղբամանների տեղադրում

2018-2019-2020-2022թ.-ին նախատեսվում է Ալագյազ համայնքի 11 վարչական բնակավայրերում տեղադրել աղբամաններ: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 5.000,0 հազար դրամ: Ծրագրի իրականացումը կնպաստի Ալագյազ համայնքի վարչական բնակավայրերում ունենալ բարեկարգ և մաքուր փողոցներ, որը նաև իր ազդեցությունը կունենա տուրիզմի զարգացման բնագավառում:

28. Ռյա-Թազա բնակավայրում սպորտ դահլիճի կառուցում

Ալագյազ միավորված համայնքի Ռյա-Թազա վարչական բնակավայրում կառուցել սպորտ դահլիճ, որը էապես կնպաստի համայնքի բնակչության ֆիզիկական

պատրաստությանը և առողջ ապրելակերպին , ինչպես նաև բնակավայրերի երիտասարդությունը կունենա զբաղմունք:

1. Ալագյազ միավորված համայնքի վարչական բնակավայրերում ներկայումս չկան որևէ սպորտ դահլիճ, որը էապես խոչընդոտում է համայնքի բնակիչներին մարզական ակտիվություն ցուցաբերելու համար , աշխատանքների իրականացումը նախատեսել 2021-2022թ. ընթացքում:
2. Համայնքի 2018թ. բյուջեում նախատեսել 25.000,0 հազ. դրամ գումար՝ կառուցելու սպորտ դահլիճը:

29. Գարու և ցորենի մթերման կայան

2020-2021թթ.-ին Ալագյազ համայնքում նախատեսվում է կառուցել գարու և ցորենի մթերման կայան : Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 15.000,0 հազար դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչները հնարավորություն կստանան իրենց ստացված բերքը շահավետ պայմաններով հանձնել մթերման կայան, որը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը:

30. Պոլիկլինիկայի կառուցում

2019-2021թթ.-ին Ալագյազ համայնքում նախատեսվում է կառուցել պոլիկլինիկա : Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ընդհանուր 50.000,0 հազար դրամ, որից համայնքային բյուջեյով նախատեսվում է 10.000,0 հազար դրամ, իսկ մնացած 40.000,0 հազար դրամն ակնկալվում է դոնոր կազմակերպություններից: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչները հնարավորություն կունենան հենց համայնքի ներսում օգտվել բժշկական ծառայություններից և ստանալ որոկյալ բուժում: Բժշկական կենտրոնը մեծ նշանակություն կունենա նաև այն առումով, որ Ալագյազ համայնքը գտնվում է լեռնային հատվածում և ձմռան ամիսներին ճանապարհների անցանելության հետ առաջանում են խնդիրներ:

31. Ռյա-Թազա բնակավայրի խմելու ջրի նոր ջրագիծ

2022թ.-ին նախատեսվում է կառուցել Ռյա-Թազա բնակավայրի խմելու ջրի նոր ջրագիծ: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է

3.500,0 հազար դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի ավելի մաքուր և սանիտարական պայմաններով ջուր մատակարարել բնակավայրին:

32. Սիփան բնակավայրում հանդիսությունների սրահի ձեռք բերում և վերանորոգում

2022թ.-ին նախատեսվում է Սիփան բնակավայրում ձեռք բերել շինություն և վերանորոգման արդյունքում այն վերածել հանդիսությունների սրահի: Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 6.000,0 հազար դրամ : Ծրագրի իրականացումը կնպաստի Սիփան բնակավայրում հուղարկավորությունների և տոնական միջոցառումների առավել պարզաճ կազմակերպելու համար:

33. Կաթի մթերման և մշակման կենտրոնի կառուցում

2020-2022թթ.-ին Ալազյազ համայնքում նախատեսվում է կառուցել կաթի մթերման և մշակման կենտրոն : Ծրագրի իրականացման համար համայնքային բյուջեյով նախատեսվում է 30.000,0 հազար դրամ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի բնակիչները հնարավորություն կստանան իրենց ստացված կաթը շահավետ պայմաններով հանձնել մթերման և մշակման կենտրոն, որը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը:

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
			2018	2019	2020	2021	2022	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետք ունե, այլ
1.	Ալազյազ, Զամշլու, Սիփան, Միջնատուն, Միրաք և Ճարճակիս բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի անցկացում	22.950,0	22.950,0					11.246,0	229,0	11.475,0

2.	Ճարճակիս բնակավայրի հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում	1.500,0	1.500,0					1.500,0		
3.	Սիփան և Ավշեն բնակավայրերը տանող ճանապարհի նորոգում	3.000,0	3.000,0					3.000,0		
4.	Միրաք բնակավայրի 1կմ երկարությամբ ներհամայնքային ջրագծի վերանորոգում	1.400,0	1.400,0					1.400,0		
5.	Ճարճակիս բնակավայր տանող 2,5կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում	150.000, 0		75.000 ,0	75.000, 0			7.500,0		142.50 0,0
6.	Միջնատուն բնակավայր մտնող 2,5կմ երկարությամբ ջրագծի կառուցում	5.000,0		5.000, 0				250,0		4.750, 0
7.	Ալազյազի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում	12.500,0	12.500,0							12.500 ,0
8	Ալազյազ, Ջամշու, Ճարճակիս և Ռյա- Թազա, բնակավայրերի Գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	4.500,0	1.500,0	1.500,0	1.500,0			4.500,0		
9	Ավշեն բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	500,0	500,0					500,0		
10	Միջնատուն, Ջամշու, Ավշեն և Սադունց բնակավայրերում հանդիսությունների սրահի վերանորոգում	8.000,0		2.000, 0	3.000, 0		3.000, 0	8.000,0		
11	Շենկանի բնակավայրի խմելու ջրի արտաքին ջրագծերի վերանորոգում	800,0				800,0		800,0		
12	Շենկանի բնակավայր տանող ճանապարհի նորոգում	3.500,0	1.500,0		2.000,0			3.500,0		
13	Միրաք բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	500,0		500,0				500,0		

14	Ջամշուր բնակավայրի 100մ երկարությամբ արտաքին ջրագծի վերանորոգում	200,0	200,0					200,0		
15	Սիփան և Ավշեն բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	1.200,0				1.200,0		1.200,0		
16	Միջնատուն և Միրաք բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	800,0					800,0	800,0		
17	Շենկանի, Կանիաշիր և Սադունց բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում	1.500,0			500,0	500,0	500,0	1.500,0		
18	Ալազյազ և Ջամշուր խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	1.000,0			500,0		500,0	1.000,0		
19	Ճարճակիս բնակավայրում խմելու ջրի ջրամբարի վերանորոգում	500,0		500,0				500,0		
20	Միջնատուն բնակավայրի խմելու ջրի ջրամբարի ի կառուցում	2.500,0				1.000,0	1.500,0	2.500,0		
21	Սադունց և Սիփան բնակավայրերի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում	900,0	400,0	500,0				900,0		
22	Ջամշուր, Սիփան և Ավշեն բնակավայրերի գազաֆիկացում	150.000,0				60.000,0	90.000,0	7.500,0	7.500,0	136.000,0
23	Ալազյազ բնակավայրում մանկապարտեզի կառուցում	40.000,0	40.000,0					2.000,0	38.000,0	
24	Ալազյազ, բնակավայրում պուրակի և խաղահրապարակի կառուցում	2.500,0		1.500,0	1.000,0			2.500,0		
25	Կանիաշիր, Շենկանի և Միջնատուն բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում	5.000,0	500,0	1.000,0	1.500,0	1.000,0	1.000,0	5.000,0		

26	Ջամշուր և Ճարճակիս բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում	2.500,0		1.500,0	1.000,0			2.500,0		
27	Ալագյազ համայնքի 11 վարչական բնակավայրերում աղբամանների տեղադրում	5.000,0	1.000,0	1.000,0	1.000,0		2.000,0	5.000,0		
28	Ռյա-Թազա բնակավայրում սպորտ դահլիճի կառուցում	25.000,0				15.000,0	10.000,0	25.000,0		
29	Գարու և ցորենի մթերման կայան	15.000,0			10.000,0	5.000,0		15.000,0		
30	Պոլիկլինիկայի կառուցում	50.000,0		10.000,0	10.000,0	30.000,0		10.000,0	40.000,0	
31	Ռյա-Թազա բնակավայրի խմելու ջրի նոր ջրագիծ	3.500,0					3.500,0	3.500,0		
32	Սիփան բնակավայրում հանդիսությունների սրահի ձեռք բերում և վերանորոգում	6.000,0					6.000,0	6000,0		
33	Կաթի մթերման և մշակման կենտրոնի կառուցում	30.000,0			15.000,0	10.000,0	5.000,0	30.000,0		
	Ընդամենը	557.250,0	86.950,0	100.000,0	122.000,0	124.500,0	123.800,0	164.296,0	85.729,0	335.225,0

4 ՀՀԶԾ ֆինանսավորում

1-ին ծրագրի (Ալագյազ, Ջամշուր, Սիփան, Միջնատուն, Միրաք և Ճարճակիս բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի անցկացում) իրականացման համար հարկավորը ընդամենը 22.950,0 հազար դրամ: 2018թվականի բյուջեում նախատեսել 11.246,0 հազար դրամ 5112 հոդվածով, դոնոր կազմակերպություններ՝ 229.0 հազար դրամ, իսկ 11.475,0 հազար դրամները պետ բյուջե :

2-րդ ծրագրի (Ճարճակիս բնակավայրի հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում, ընդհանուր արժեքը 1500,0 հազար դրամ)

իրականացման համար 2018 թվականի բյուջեում նախատեսել 1500,0 հազար դրամ համայնքի բյուջեի 5113 հոդվածով: Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

3 - րդ ծրագրի (Սիփան և Ավշեն բնակավայրերը տանող ճանապարհի նորոգում, ընդհանուր արժեքը 3000,0 հազար դրամ) իրականացման համար 2018 թվականի բյուջեում նախատեսել 3000,0 հազար դրամ համայնքի բյուջեի 4251 հոդվածով: Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

4-րդ ծրագրի (Միրաք բնակավայրի 1կմ երկարությամբ ներհամայնքային ջրագծի վերանորոգում, ընդհանուր արժեքը 1400,0 հազար դրամ) իրականացման համար 2018 թվականի բյուջեում նախատեսել 1400,0 հազար դրամ համայնքի բյուջեի 5113 հոդվածով: Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

5-րդ ծրագրի (Ճարճակիս բնակավայր տանող 2,5կմ երկարությամբ ճանապարհի ասֆալտապատում, ընդհանուր արժեքը 150.000,0 հազար դրամ) իրականացման համար 2019-2020 թվականներին բյուջեում նախատեսել 7.500,0 հազար դրամ 5113 հոդվածով, պետ բյուջե՝ 142.500,0 հազար դրամ : Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի և պետ բյուջեի միջոցներով:

6-րդ ծրագրի (Միջնատուն բնակավայր մտնող 2,5կմ երկարությամբ ջրագծի կառուցում, ընդհանուր արժեքը 5.000,0 հազար դրամ) իրականացման համար 2019թվականի բյուջեում նախատեսել 250,0 հազար դրամ 5112 հոդվածով , պետ բյուջե՝ 4.750,0 հազար դրամ : Ծրագիրն ամբողջությամբ իրականացնել համայնքի բյուջեի և պետ բյուջեի միջոցներով:

7-րդ ծրագրի (Ալագյազի համայնքապետարանի շենքի կապիտալ վերանորոգում, ընդհանուր արժեքը 12.500,0 հազար դրամ) իրականացման համար 2018թվականի պետ բյուջեով ակնկալել 12.500,0 հազար դրամ :

8-րդ ծրագրի (Ալագյազ, Զամշլու, Ճարճակիս և Ռյա-Թազա, բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում, ընդհանուր արժեքը 4500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2018-2020թվականներին բյուջեում նախատեսել 4500.0 հազար դրամ 4251 և 5113 հոդվածներով համայնքի բյուջեի միջոցով:

9-րդ ծրագրի (Ավշեն բնակավայրի Խմելու ջրի ջրամբարների վերանորոգում, ընդհանուր արժեքը 500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

10-րդ ծրագրի (Միջնատուն, Զամշլու, Ավշեն և Սադունց բնակավայրերում հանդիսությունների սրահի վերանորոգում, ընդհանուր արժեքը 8.000,0 հազար դրամ) վերանորոգման համար 2019-2020-2022թվականներին բյուջեում նախատեսել 8.000,0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

11-րդ ծրագրի (Շենկանի բնակավայրի Խմելու ջրի արտաքին ջրագծերի վերանորոգում, ընդհանուր արժեքը 800,0 հազար դրամ) վերանորոգման համար 2021թվականին բյուջեում նախատեսել 800.0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

12-րդ ծրագրի (Շենկանի բնակավայր տանող ճանապարհի նորոգում, ընդհանուր արժեքը 3.500,0 հազար դրամ) նորոգման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 1500,0 հազար դրամ 4251 հոդվածով , 2020թվականին՝ 2000,0 հազար դրամ 5113 հոդվածով բյուջեի միջոցով:

13-րդ ծրագրի (Միրաք բնակավայրի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում, ընդանուր արժեքը 500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2019թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

14-րդ ծրագրի (Ջամշու բնակավայրի 100մ երկարությամբ արտաքին ջրագծի վերանորոգում, ընդանուր արժեքը 200,0 հազար դրամ) վերանորոգման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 200.0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

15-րդ ծրագրի (Սիփան և Ավշեն բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում, ընդանուր արժեքը 1200,0 հազար դրամ) վերանորոգման համար 2021թվականին բյուջեում նախատեսել 1200.0 հազար դրամ 4251 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

16-րդ ծրագրի (Միջնատուն և Միրաք բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում, ընդանուր արժեքը 800,0 հազար դրամ) վերանորոգման համար 2022թվականին բյուջեում նախատեսել 800.0 հազար դրամ 4251 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

17-րդ ծրագրի (Շենկանի, Կանիաշիր և Սադունց բնակավայրերի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգում, ընդանուր արժեքը 1500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2020թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ, 2021թվականին՝ 500,0 հազար դրամ և 2022թվականին՝ 500,0 հազար դրամ, 4251 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

18-րդ ծրագրի (Ալագյազ և Ջամշու խմելու ջրի ջրամբարների վերանորոգում, ընդանուր արժեքը 1000,0 հազար դրամ) վերանորոգման համար 2020թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ, 2022թվականին՝ 500,0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

19-րդ ծրագրի (Ճարճակիս բնակավայրում խմելու ջրի ջրամբարի վերանորոգում, ընդանուր արժեքը 500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2019թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

20-րդ ծրագրի (Միջնատուն բնակավայրի խմելու ջրի ջրամբարի կառուցում, ընդանուր արժեքը 2.500,0 հազար դրամ) կառուցման համար 2021թվականին բյուջեում նախատեսել 1000.0 հազար դրամ, 2022թվականին՝ 1500,0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

21-րդ ծրագրի (Սադունց և Սիփան բնակավայրերի խմելու ջրի ջրամբարների վերանորոգում, ընդանուր արժեքը 900,0 հազար դրամ) վերանորոգման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 400.0 հազար դրամ, 2019թվականին՝ 500,0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

22-րդ ծրագրի (Ջամշու, Սիփան և Ավշեն բնակավայրերի գազաֆիկացում, ընդանուր արժեքը 150.000,0 հազար դրամ) կառուցման համար 2022թվականին բյուջեում նախատեսել 7.500,0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով, իսկ պետ բյուջեից ակնկալել 136.000,0 հազար դրամ:

23-րդ ծրագրի (Ալագյազ բնակավայրում մանկապարտեզի կառուցում, ընդանուր արժեքը 40.000,0 հազար դրամ) կառուցման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 2.000,0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով, իսկ դոնոր կազմակերպություններից ակնկալել 38.000,0 հազար դրամ:

24-րդ ծրագրի (Ալագյազ, բնակավայրում պուրակի և խաղահրապարակի կառուցում, ընդանուր արժեքը 2.500,0 հազար դրամ) կառուցման համար

2019թվականին բյուջեում նախատեսել 1500.0 հազար դրամ, 2020թվականին՝ 1000,0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

25-րդ ծրագրի (Կանիաշիր, Շենկանի և Միջնատուն բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում, ընդանուր արժեքը 5000,0 հազար դրամ) վերանորոգման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 500.0 հազար դրամ, 2019թվականին՝ 1000,0 հազար դրամ, 2020թվականին՝ 1500,0 հազար դրամ, 2021թվականին՝ 1000,0 հազար դրամ, 2022թվականին՝ 1000,0 հազար դրամ, ընդամենը 5.000,0 հազար դրամ 4251 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

26-րդ ծրագրի (Ջամշու և Ճարճակիս բնակավայրերի դպրոցների շենքերի մասնակի վերանորոգում, ընդանուր արժեքը 2500,0 հազար դրամ) վերանորոգման համար 2019թվականին բյուջեում նախատեսել 1500.0 հազար դրամ, 2020թվականին՝ 1000,0 հազար դրամ 5113 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

27-րդ ծրագրի (Ալագյազ համայնքի 11 վարչական բնակավայրերում աղբամանների տեղադրում, ընդանուր արժեքը 5000,0 հազար դրամ) տեղադրման համար 2018թվականին բյուջեում նախատեսել 1.000,0 հազար դրամ, 2019թվականին՝ 1000,0 հազար դրամ, 2020թվականին՝ 1000,0 հազար դրամ, 2022թվականին՝ 2000,0 հազար դրամ 4269 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

28-րդ ծրագրի (Ռյա-Թազա բնակավայրում սպորտ դահլիճի կառուցում, ընդանուր արժեքը 25000,0 հազար դրամ) կառուցման համար 2021թվականին բյուջեում նախատեսել 15.000.0 հազար դրամ, 2022թվականին՝ 15.000,0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

29-րդ ծրագրի (Գարու և ցորենի մթերման կայան, ընդանուր արժեքը 15.000,0 հազար դրամ) կառուցման համար 2020թվականին բյուջեում նախատեսել 10.000.0 հազար դրամ, 2021թվականին՝ 5000.0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

30-րդ ծրագրի (Պոլիկլինիկայի կառուցում, ընդանուր արժեքը 50.000,0 հազար դրամ) կառուցման համար 2021թվականին բյուջեում նախատեսել 10.000.0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով, իսկ մնացած 40.000,0 հազար դրամն ակնկալել դոնոր կազմակերպություններից:

31-րդ ծրագրի (Ռյա-Թազա բնակավայրի խմելու ջրի նոր ջրագիծ, ընդանուր արժեքը 3500,0 հազար դրամ) կառուցման համար 2022թվականին բյուջեում նախատեսել 3500.0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

32-րդ ծրագրի (Սիփան բնակավայրում հանդիսությունների սրահի ձեռք բերում և վերանորոգում, ընդանուր արժեքը 6000,0 հազար դրամ) վերանորոգման համար 2022թվականին բյուջեում նախատեսել 6000.0 հազար դրամ 4269 և 5113 հոդվածներով համայնքի բյուջեի միջոցով:

33-րդ ծրագրի (Կաթի մթերման և մշակման կենտրոնի կառուցում, ընդանուր արժեքը 30.000,0 հազար դրամ) կառուցման համար 2020թվականին բյուջեում նախատեսել 15.000.0 հազար դրամ, 2021թվականին՝ 10.000,0 հազար դրամ, 2022թվականին՝ 5000,0 հազար դրամ 5112 հոդվածով համայնքի բյուջեի միջոցով:

1. ՀՀԶԾ մոնիթորինգ

ՀՀՀԾ-ի մշտադիտարկումը (մոնիթորինգը) ՀՀՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀՀԾ և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից կիսամյակը մեկ անգամ: ՀՀՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: ՀՀՀԾ-ի ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով ՀՀՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ն կներկայացնի համայնքի ղեկավարին, վերջինս էլ օրենքով սահմանված կարգով այն կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Հավելված 1

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ա Ն Ա Գ Ի Ր /1/

« Ալագյազ, Զամշու, Սիփան, Միջնատուն, Միրաք և Ճարճակիս բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի անցկացում »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. բնակավայրերի սոցիալ կենցաղային խնդիրը 2. գիշերային ժամերին անբավարար տեսանելություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	22.950,0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	22.950,0	0	0	0	0
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	22.950,0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ - Նոր փողոցային լուսավորության կառուցում - Ալագյազ համայնքը դարձնել 100% լուսավորված համայնք						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0 Կապիտալ ծախսեր՝22.950,0 Ընդհանուր բյուջեն՝22.950,0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							

Ծրագրի հիմնական դիսկերը	մի քանի բնակավայրերում ազատար խողովակների առկայություն
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2018-30.06.2018
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ամբողջ համայնքում լուսավորության ապահովում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /2/

« Ճարճակիս բնակավայրի հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում » (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. սրահի հատակը գտնվում է ոչ նորմալ վիճակին						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
		2017	2018	2019	2020	2021	2022
			1500.0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ(հազար դրամ)				
		2017	2018	2019	2020	2021	2022
			1500.0	0	0	0	0
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
			0	0	0	0	0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ ամբողջ հատակի սալիկապատում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0 Կապիտալ ծախսեր՝1500.0 Ընդհանուր բյուջեն՝1500.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	բնակավայրի բնակիչների օգնություն						
Ծրագրի հիմնական դիսկերը	չկան						

Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.01.2018-31.12.2018
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ճարճակիս բնակավայրում կառուցված հանդիսությունների սրահի հատակի սալիկապատում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր /3/

« Սիփան և Ավշեն բնակավայրերը տանող ճանապարհի նորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	1. միջհամայնքային ճանապարհները գտնվում են ոչ բարեկարգ վիճակում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	3.000,0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2017	2018	2019	2020	2021	2022
		0	3.000,0	0	0	0	0
	2.						
